

ԿԱՐՄԻՐ ԳԾԵՐ ՍԵՎ ԼՃԻ ՄՈՏ

Ղարաբաղի պատերազմում հաղթանակից հետո Ադրբեջանը սպառնում է նաև Հայաստանի պետական տարածքին

Ստեֆան Շոլ

Թուրքական զենքի օգնությամբ՝ աշնանն Ադրբեջանը հետ գրավեց հայկական անկլավ Լեռնային Ղարաբաղի մեծ մասը: Հիմա այն սեղմում է բուն Հայաստանի տարածքը: Անցած շաբաթ, ըստ Երևանի տեղեկությունների, ադրբեջանական զինված ուժերը 3.5 կիլոմետր առաջ շարժվեցին դեպի Հայաստանի հարավային Սյունիքի մարզ՝ նպատակ ունենալով գրավել երկու քառակուսի կիլոմետր մակերեսով Սև Լճի բոլոր ափերը: Հայկական զորքերի հետ ուղիղ բախումներ տեղի չունեցան, երկու կողմերը բանակցում են ռուս սպաների միջնորդությամբ: Սակայն կիրակի Բաքուն ցուցական սկսեց լայնամասշտաբ զորավարժություն՝ շուրջ 15.000 մարդկանցով, 400 զրահամեքենաներով և 50 մարտական ինքնաթիռներով:

Նոյեմբերի 9-ի հրադադարի համաձայնագրից ի վեր օրակարգում տեղային սահմանային խախտումներն են, երկու կողմերի թշնամությունը հար է ատելությանը: «Առ այսօր մենք առերեսվում ենք ահաբեկչության և պարտիզանների հետ», - ասում է ադրբեջանցի լրագրող Էմիլ Ախունդովը “MBCH-Media” ռուսական պորտալին: Նա նշում է, որ Հայաստանը դեռ հրաժարվում է տրամադրել ազատագրված Լեռնային Ղարաբաղի ականային դաշտերի վերաբերյալ բոլոր քարտեզները: Դրան հակառակ՝ Ալեքսանդր Իսկանդարյանը՝ Երևանի «Կովկասի ինստիտուտ»-ի ղեկավարը, շեշտում է, որ հաշվի առնելով Սև Լճի մոտ մոտավորապես 250 ադրբեջանցի զինվորներին, ինչպես նաև՝ հստակ սահմանազատումն այնտեղ՝ հակամարտությունը բռնում է վերտարածաշրջանային չափեր: «Գրոհն ընդհանուր ռազմավարության մաս է, որը նպատակ ունի դիպչել կարմիր գծերին»: Քանի որ հայկական Սյունիքի մարզն ընկած է Ադրբեջանի և նրա էքսկլավ Նախիջևանի միջև:

Ըստ հրադադարի համաձայնագրի՝ ադրբեջանցիները պետք է ստանային ռուսական զորքերի կողմից վերահսկվող՝ 44 կիլոմետրանոց տրանսպորտային միջանցք Սյունիքով: Հայերը, որոնք մեղադրում են Ադրբեջանին դեռ ռազմագերիներ պահելու մեջ, ձգձգում են շինարարական աշխատանքները: Մայիսի կեսերին Ադրբեջանի ղեկավար Իլհամ Ալիևը սպառնում էր, որ եթե անհրաժեշտ լինի, ապա հարցը կլուծեն բռնի ուժով: «Հարավային Կովկասում կա հակամարտության նոր շրջան», - վերնագրում է մոսկովյան «Իզվեստիա» թերթը:

Քաղաքագետ Իսկանդարյանը երկյուղ է կրում, որ խաղաղության համաձայնագրի բացակայության պատճառով տեսանելի ապագայում հակամարտությունը չի ավարտվի: Նա նշում է, որ Ալիևն այն օգտագործում է նաև որպես ուժեղ մարդ ներկայանալու համար: Մյուս կողմից՝ Բաքուն անում է ամեն բան՝ Հայաստանում ներքաղաքական հակամարտությունը

Թեժացնելու համար: Հունիսին այնտեղ կընտրվի նոր խորհրդարան: Իսկ Ժամանակավոր նախագահ Նիկոլ Փաշինյանը, գոնե դիվանագիտորեն, դուրս բերեց ամենաձանր հրետանին. նա նամակ գրեց Վլադիմիր Պուտինին՝ խնդրելով ռազմական օժանդակություն՝ Ադրբեջանի սահմանային խախտումների պատճառով: Արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հավաստիացրեց, որ իրենք պատրաստ են օգնելու երկու կողմերին իրենց սահմանների դեմարկացիայի դեպքում: Ռուսաստանի կարմիր գիծը, կարծես թե, պարտադիր չէ, որ լինի այն սահմաններում, որոնք պաշտպանում է դաշնակից Հայաստանը:



MESSINIS AFF

Հայկական հրետանին Ղարաբաղում (արխիվային լուսանկար): ARIS